# ՎԵՐԱԿԵՆԴԱՆԱՑԻՐ ԱՅՍ ԶԱՏԿԻՆ

**Ապրիր լավագույն կյանքով**

**Մաս 1**

*«Մի փոքր ժամանակ ևս, և աշխարհն այլևս ինձ չի տեսնի. բայց դուք ինձ կտեսնեք, որովհետև ես կենդանի եմ, և դուք նույնպես կենդանի եք լինելու:»* Հովհաննես 14:19

*«Բոլորի համար մեռավ, որպեսզի կենդանի եղողներն այլևս ոչ թե իրենք իրենց համար կենդանի լինեն, այլ նրա՛ համար, որ իրենց համար մեռավ ու հարություն առավ:»* 2 Կորնթացիս 5:15

## Ո՞րն է Հիսուսի առաջարկած լավագույն կյանքը

### 1. Իմաստավորված կյանքն է

*«Քրիստոսը՝ մեր կյանքը …»* Կողոսացիներին 3:4

*«Օրհնյալ է Աստված … որ իր առատ ողորմությամբ մեզ վերստին ծնեց կենդանի հույսի համար՝ մեռելներից Հիսուս Քրիստոսի հարությամբ, այն անեղծ, անարատ ու անթառամ ժառանգության համար, որ երկնքում պահված է ձեզ համար.»* Ա. Պետրոս 1:3-4

### 2. Սա Շնորհքով ազատագրված կյանք է

*«Այժմ օրենքից ազատված ենք, … որպեսզի հոգու նորոգմամբ ծառայենք և ոչ թե հին գրով:»* Հռոմեացիներին 7:6

*«Առաջին պատվիրանի բեկանումը դրա տկարության և անօգուտ լինելու պատճառով էր, որովհետև օրենքը կատարյալ ոչինչ չի արել, փոխարենը լավագույն հույսը ներթափանցեց, որով մոտենում ենք Աստծուն:»* Եբրայեցիներին 7:18-19

*«Ինքն իրեն բոլորի համար փրկագին տվեց:»* Ա. Տիմոթեոսին 2:6

*«Որովհետև եթե ըստ մարմնի ապրեք, կմեռնեք, բայց եթե հոգով մարմնի գործերն սպանեք, կապրեք:»* Հռոմեացիներին 8:13

### 3. Սա Էներգիայով լի կյանք է

*«Ես պիտի հագեցնեմ հոգնաբեկ հոգին և պիտի գոհացնեմ յուրաքանչյուր նվաղած հոգին:»* Երեմիա 31:25

*«Ոչ թե զորությամբ և ոչ էլ ուժով, այլ իմ հոգով,- ասում է Զորքերի Տերը:»* Զաքարիա 4:6

«Քրիստոսին մեռելներից հարություն տվողը ձեր մահկանացու մարմիններն էլ կկենդանացնի իր Հոգու միջոցով, որ բնակվում է ձեր մեջ:» Հռոմեացիներին 8:11

*«Թեև մեր արտաքին մարդը քայքայվում է, բայց մեր ներքին մարդն օրեցօր նորոգվում է:»* 2 Կորնթացիներին 4:16

## Ինչպե՞ս եմ կարող ապրել այս արտակարգ կյանքը

*«Քրիստոսով բոլորը կենդանանում են:»* Ա. Կորնթացիներին 15:22

*«Ես եկա, որ կյանք ունենան և առատ կյանք:»* Հովհաննես 10:10

Հաջորդ Քարոզի Թեման

**ՀԱՃՈՒՅՔ ԹԷ ԵՐՋԱՆԿՈՒԹԻՒՆ**

**Հովիւ Սարօ Խաչիկեան**